

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԱՌՆ ԵՐԱՆԵԼԻՈՅ
ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՎՊՈԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵՐՈՅ ԹԱՐԳՄԱՆՁԻ,
Ի ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՅԱՇԱԿԵՐՏԷ ՆՈՐԻՆ



Առն, զոր ի հախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյր արարեալ մեր պատմելոյ. Էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղէլ, որդի առն Երանելոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ՝ հեղինական դպրութեամբն, Եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց բազաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարժունական դիւանին, լինել սպասաւոր արքայաւոր հրամանին առ հազարապետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն, և անդէն ուշ եղեալ փութով բերեցումոց աստուածեղէն գրոց. որով առ ժամայն լուսաւորեալ և քեամովս միջամովս յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զաննն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնն:

... Եւ այնպէս տրտմական հոգով՝ պաշարեալ և քակարդապատեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց, երէ որպիսի՝ արդեօք էլս իրացն գտանիցէ: Եւ իբրև աուրս բազումս անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնունտե հասանէր առ սուրբ կարողիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն հանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ: Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիմ մեծով առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգոց Բրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ, և զայն առնէին աուրս բազումս: Ապա էլանէր նոցա պարզեական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն Երանելի միաբանելոցն, և զիս նշանագրոյ Հայաստան ազգին հասանել. բազում հարց փորձի և բնութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ, ազգ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իրեանց քաղաութին Հայոց, որոյ անուն կոչէր Վաւաշապոյն:

... Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օհան գտանելոյ: Որում պարզելի իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական շափուն ծնեալ ծնունդս նորոգ և սփանչելի սուրբ աշովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիրողալիմ և կապօք: ... Եւ Եղեալ սկիզբն հայս յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով, երէ՛ «Հանաչել զիմաստութիւն և զխառ, իմանալ զբանս հանճարոյ»: Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան:

... Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց, անպայման սփանչելի լինէր. յորում անկարծ ուրումն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և յառաջադէմն Պաղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց անտառանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառ հայերէնախօս գտան:

Անդ էր այնունտե սիրալիր ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն: Քանզի Երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սփանչեղագործութիւնքն գործեցան, առժամայն վաղվաղակի ամենայն իրացն Եղելոց խելամուտ լինէր. ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն, այլ և յառաջագոյն յախտենիցն, և ապա եկելոցն սկզբանն և կատարածի, և ամենայն աստուածատուր աւանդութեանցն: Իսկ իբրև զշափ առեալ զիրացն հաստատութեան, և համարձակագոյն և առաւելագոյն զաշխարհութիւնն նորագիտ վարդապետութեանն՝ խմբէին ուսուցանել և բեմել, և պատրաստական Բարոգութեանն անգէտ մարդկան յօրինել. որոց և ինքեանք իսկ ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհին յորդեալ և դրդեալ հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ: Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս քաղաութեան և Բանանայապետացն, բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ:

